

«Եթէ չափանդութիւն, կուսակցական կոյր հետեւողութիւն, թեթեւամտութիւն, ցուցամուտութիւն և մեծամտութիւն մենէ հեռու ըլլան, և անկեղծօրէն միայն հայութեան ապագան խորհինք, կարող ենք մենք զմեզ վերականգնել ու հայութիւնը մօտալուտ կործանումէ վերկել»:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ամէն տեղիւ համար դինն է
Տարեկան արծաթ ֆրանք 5
Վեցամսեան 3
Բժնեգրները կանխիկ վճարովի են:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը պատկանի:

Ազգի մը ապագայ կեանքի բարոյքման առաջին պայմանն է ՄԻՈՒԹԻՒՆ:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ ՏԱՐԻ

1897 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱԹԵՆՔ

ԹԻՒ 17

ՄԻՈՒԹԻՒՆ

Գ Ա Մ

ՀԱՄԵՐԱԾԵՈՒԹԻՒՆ

Մեր նախնիքային թուով հրատարակեցինք Պատ. Տեառ Թափառիկի այն յօդուածն՝ որ մասնաւոր կ'ընէր յեղ. կուսակցութեանց սխալ քայլերն և անոնց բուն դործի ու նպատակի յարմար ծրագիր չունենալը և այլն:

Այս դատողութեան արդարացի և անհերքելի տրուել իրականութիւն մը ըլլալը տարակոյտ չլիքընք, քանի որ խնդրը զանազան փաստերով լուսաբանուած ու գործնական փորձերով ապացուցուած է:

Պ. Թափառիկ կ'ըսէ թէ՝ «Եթէ չափանդութիւն, կուսակցական կոյր հետեւողութիւն, թեթեւամտութիւն, ցուցամուտութիւն և մեծամտութիւն մենէ հեռու ըլլան, և անկեղծօրէն միայն հայութեան ապագան խորհինք, կարող ենք մենք զմեզ վերականգնել ու հայութիւնը մօտալուտ կործանումէ վերկել»:

Սոյն տողերու զուտ ճշմարտութիւն մը ըլլալուն վրայ այնքան համոզուած ու համակրած ենք, որ հաստատուելու համար «Միութիւն»-ի ձեռնարկը կը զետեղենք:

Իր տեսութիւնը միութեան գաղափարի շուրջը դարձնելով՝ հետեւեալ անկարկութիւնները կ'ընէ. «Ես իսկապէս միութեան ջերմ փափագողն եմ. սակայն լաւ կ'ըսեմ նաեւ անոր դժուարութիւնները, և այն աստիճան հաստատ համոզում մը ունիմ որ ան կ'արելի իսկ կը նկատուի»:

Ուրիշ տեղ մը կ'ըսէ. — «Եթէ խմբագրութիւնը համակարծիք գրողներէ մեզ թող հաճի մի ու թ եւ ան դադարաւ մի կողմ թողուլ և անկողնակալ ոգով աշխատի միայն համար աշխուժութեան պէտքը բարոյքել, զգացնել և իրականացնել»:

Ստորոգէ թէ՝ միութիւնը և համար աշխուժութիւնը բառերու բուն նշանակութեամբ իրարմէ կը զանազանին, իսկ գաղափարն ալ զոչութեան մասին՝ կամ որ աւելի լաւ է ըսել գործնականին մէջ, նկատի առնելով Հնչակեան կուսակցութեան քայքայած վիճակը և Դաշնակցութեան դոյացուցած այն փորձիկ օղջը, որ զժողովրդաբար անբաւական է հայութեան իր բազմադարեան թշնամոյն ճիրաններէն փրկել և մեծ գործը յաջողցնել, բոտ մեզ ըլլայ միութիւն ըլլայ համարաշխուժութիւն երկուքն ալ համարաշխուժութիւն:

նշանակութիւն և միեւնոյն արդիւնքը կրնան ունենալ Յեղ. կուսակցութեանց արդի խառնաշփոթ կացութեան մէջ:

Մենք պատրաստ ենք ամենայն սիրով համակերպիլ Պատ. Թափառիկի առաջարկին և մէկ կողմ թողլով միութեան անիրականաւրդալիքը՝ աշխատել համարաշխուժեան պէտքը չղացնել: Բայց ի՞նչ հիման վրայ յենլով կրնանք յուսալ և հաւատալ թէ համակարգութեան իրականացումն աւելի հեշտ կրնայ ըլլալ, քանի որ մեր կուսակցութեանց յարգելի կարեւոր անդամներու միջև կուսակցամուտութիւնը, ատեւութիւնն ու հակիրճութիւնը այն աստիճան արմատացած է որ աւելի հեշտ է թուրքիւն Հայ յեղափոխականութեան հետ հաշտեցնել, քան թէ Դաշնակցականները Հնչակեաններու հետ: Միութեան կարելի է գայլն ոչ խաբի հետ հաշտեցնել, կը կրկնենք մեր խօսքը. — Իցի՛ւ թէ կարելի ըլլար համարաշխուժեան գոյացումը, մենք և մեր բոլոր գաղափարակիցները չափազանց գնչ պիտի ըլլայինք և՛ միեւնոյն ժամանակ միութեան պատահութիւնը անկարեւոր պիտի հռչակէինք, սակայն վերոյիշուած բանաւոր պատճառները, կը հարկադրեն զմեզ ցաւօք սրտի խոտովանիլ թէ՛ եթէ միութեան իրականացումը ըստ Տ. Թափառիկի անկարելի է, ըստ մեզ համարաշխուժեան դոյացումն ալ երբեք կարելի չէ:

Ընթերցողն իրաւունք ունի հարցնելու մեզ թէ՛ անիրականաւրդալիք մը համար ի՞նչպէս կ'աշխատել այսչափ ժամանակէ ի վեր և միանուագ միութիւն կը գոչէ: Խնդրը պարզ է. — Մենք մէկ ու կէս տարիէ ի վեր միութիւնը բարոյքելով անպատճառ չենք ուզած այդ երկու հակառակ կողմերը անպայման կերպով միացնել, և դիւրաւ սպաննել տալով արեւահեղութեանց պատճառ դառնալ, այլ կը ջանանք պայմանաւոր հիմնական (*) միութիւն մը առաջ բերել հետեւեալ կարելի միջոցներով:

Ա. — Չէզոք, վստահելի և ազդեցիկ անձնաւորութիւններէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմել երկու կուսակցութեանց նախաձեռնութեամբ:

Բ. — Դաշնակցութիւնը՝ մի քանի անդամներէ բաղկացեալ մասնախումբ մը կազմելով իր պատգամաւորութիւն կը ներկայացնէ յանձնաժողովին՝ բանակցելու համար:

(*) Մեր պահանջած հիմնական միութեան պայմանները տես «Միութիւն»-ի 15րդ թիւին մէջ, որուն օրինակները սպառած են զանազան տեղերէ պահանջուած ըլլալուն համար, մեր առաջիկայ թիւով կը կրկնենք հրատարակութիւնը:

Գ. — Հնչակեան կուսակցութիւնը նմանապէս մասնախումբ մը կը կազմէ Դաշնակցութեան հանձնաձեռնէ բաղկացեալ, և իր պաշտօնական մարմին կը ներկայացնէ յանձնաժողովին:

Սոյն խառն ժողովը միութեան հարցը վիճաբանութեան ենթարկելով՝ գոյութիւն ունեցող կուսակցութեան ծրագիրը կը բարեփոխէ թէ՛ հարկ է, եթէ ոչ. ինչնովիւն ընդունելով կը միացնէ երկու կուսակցութեանց անձամբ օյժերն, կուսակցութեան մի նոր անուն տալով, և իր կազմակերպութեան մէջ Հայ հասարակութեան վստահութիւնը վայելող և բարձր գիշեր ունեցող 2-3 անդամներ ևս աւելցնելով:

Ահա այս է մեր պահանջած միութիւնը և յաջողութեան ամենադիւրիմ միջոցը, եթէ կ'ուզենք զօրաւոր կուսակցութիւն մը ունենալ, նիւթական ոյժ գոյացնել և մեր նպատակին հասնիլ: Իսկ համարաշխուժեան անկարելիութիւնը ապացուցանելու համար իբր փաստ բաւական է ներկայացնել «Դիւշակ»-ի կծու հրատարակութիւնները Արփիարականաց գէմ: Արփիարի թուեաւորէ՛ք զրիւր ժոհնէվցիներու դէմ և Նազարէկի հայհոյիչ լեզուն Պ. Չէրալի դէմ ևն»:

Այսու հանդերձ չենք ուզեր յուսահատեցնել Պ. Թափառիկը իր համոզման մէջ, այլ «Միութիւն»-ի էջերը բաց կը թողունք իր գրչին անջնալ, որ ուզածին չափ գրէ և համարաշխուժեան բարոյքէ, մինչև որ գործնական արդիւնքը կամ անյաջող փորձը տեսնէ ու համոզուի:

* *

ՀԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՂԻՒՆ, Նոյեմբ. 19

Խմբագիր

Ինչպէս ընդհանուր հայութեան նոյնպէս և վեր փափագն է յեղափոխական մարմնաց միութիւնը, նոցա միութեանէն և կամ համարաշխուժութեանէն կախում ունի Հայրենիքի փրկութիւնը, բոտ մեզ փափաքելի է որ միութիւնը արմատանայ, նորա սերմերը որ Ձեր քարոզներն են, ծաւալին հայութեան մէջ, արդիւնաւոր ըլլան:

Համակիր Ձեր քարոզներուն, հակառակ մի բան անգամ չենք կարող արտասանել. ի սրտէ կը փափայինք որ միութիւնը վաղ ընդփոխ զօրեղացուի: Միութիւնը ինքնին սուրբ և նուիրական է:

Ինչպէս կ'ըսէ Եղիշէ պոետագիրը. «Գուցութիւնն է մայր բարեաց անգուցութիւնն ծնող չարեաց»:

Մեր խղճի և մեր գաղափարի համագումն է այս, սակայն ցաւալի կէտ մը կայ որ ոմանք ըմբռնած չեն միութիւնը այնպէս՝ ինչպէս պէտք է ըմբռնել յօգուտ հայութեան, մեղադրելի է այդպիսիներու ընթացքը, քննասկար և անպատուաբեր աղատութեան Սուրբ Գործին:

Խմբագիր, ուրախութեամբ կարդացինք հոկտեմբեր ամսու «Միութիւն»-ի մէջ Ազգ. Յեղ. Միացեալ կուսակցութեան կանոնադրը, կանոնագիր մը որ համապատասխան է հայուն զգալի պէտքերուն, և դարման նորա աղատութեան և ուղղութեան: Մենք անհամբեր կ'սպասենք խոհուն եւ լուրջ անձնաւորութեանց, որ գործին զեկը ձեռք առնեն ինչպէս կը արաւարդէ կանոնագիրը: Կուսակցային անվերջ կռիւններէ սաստիկ ձանձրացած ենք . . .

Վերջերս հրապարակ ելան անձեր, որոնք ըստ ինքեան յեղափոխական և ջերմ միութենական են: Այս անունով սկսած են կողոպտել ժողովուրդը, այն ժողովուրդը, որ հայրենի հողէն զրկուած, իր ընտանիքն ու զաւակները նոթի, անպաշտպան և ինքը այս օտար երկրի մէջ թշուառութեան բաժակը ցմբռն կը բաժնէ, այն ժողովուրդը, որ հազիւ աղատած է թուրքին ու քուրդին սրէն, այս աղատ երկրին մէջ իսկ չկրնար ապահով մնալ միութեան անուան տակ ծածկուած անխիղճ եսամուկներէ ու թշուառական շահախնդրներու շահատուկութիւններէ: Այն գործիչներն ալ որ այսօր հրապարակի վրայ կը գտնուին, անգիտակ են Հայաստանցիին կեանքին, փայլուն խօսքերով կը ներկայանան ժողովուրդին. ուսկից բնաւ բան մը չհասկնար:

Պէտք է վերջ տանք այս խաբալու գրութեան, մտնենք միութեան սուրբ դռներն տակ, մէկ սիրտ մէկ հոգի նետուինք կուսակցութեան համար որոշեցինք մեր յառաջիկայ թիւին մէջ առանձին յօդուածով մը պատասխանել:

* *

Պուրկազ հաստատուած «Հայ Յեղ. Միութիւն» ընկերութեան անհրաժեշտ, վերջերս ելած են Պուրկաբիոյ կայարանները և ստակ կը հաւաքեն այդ ընկերութեան անուանով: Կը հանդիպին գաւառացի հայու մը և անոր ունեցած Չ/չ զուրուր ձեռքէն կ'առնեն, փոխարէն՝ անգործագիր մը տալով: Այդ ինքնակոչ ազգասէրները երբեք չեն հետաքրքրուիր որ յիշեալ գաւառացին տարիէ մը ի վեր է աչքի հիւանդութեամբ կը տառապի, ունեցած ամբողջ հարստութիւնը վատնած է իր հիւանդութիւնը դարմանելու, և այսօր հացի կը կարտի: Ահա՛ անձնաւորութիւններ, որոնք միութեան բողի տակ ժողովուրդը կը կեղեքեն: Տեսնելով այսպիսի ապօրինաւորութիւններ և անխղճութիւններ, լուեւ և չխօսիլ խղճի դէմ կը նկատենք:

Ներկայիս Ձեր ուղղորդութիւնը

կը հրաւիրենք, այսպիսիներու վատ ընթացքն ու արաքն է որ նոյն իսկ հակառակ է Ձեր զծած կանոնադրութեան և վիճում մըն է միութեան փափուկ խնդրին:

Հայ Յեղ. Դաշնակցութեան Օժանդակ Կոմիտէն՝ փափագելով հանդերձ յեղ. մարմնաց միութեան, կը խնդրէ որ մինչև միութեան խրդրոյն լուծումը, այդպիսի պոռոտախօս անձերու հրապարակ ելելը արգիւտի, որոնք գործողութիւնները քննասկար է Ձեր քարոզած աղաքափարին: Ուստի խնդրենք «Միութիւն»-ի միջոցաւ զեկուցում մը ընել հաճեք, որով ժողովուրդը զգուշանայ այսպիսի անբեւեւ ինքնատիչ շահախնդրներէ:

Հայ Յեղ. Դաշն. Օժանդակ Կոմիտէ Միութեան
Թ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ ՄԱՆԿՈՒՆԻ
ՓԵՏՈՒՐ

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ
ԵՒ ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Բ
(Շար. 16րդ թիւէն)

Մեր նախնիք բարձիւ մէջ մենք չծանրացանք ոչ մի յեղափոխական սկզբունքի վրայ, այլ միայն բաւականացան Նազարէկի թերութիւններուն մի շատ համառօտ նկարագիրը ներկայացնել: Նազարէկի ճշգրիտ պատմութիւնը հատորներ պիտի կազմէ:

Խոստացած էի երկրորդ յօդուածով մը քննել Դաշնակցական վատ ընթացքը և անոնց սկզբունքները, բայց աւելի լաւ ըմբռնելու համար պարտաւորած ենք մի քիչ խօսիլ մեր յեղափոխական կազմակերպութեանց մի ընդհանուր սխալի վերայ, շատեր գուցէ ուշադրութիւն չդարձցին այդ կէտի վրայ կամ անկարեւոր նկատեցին, բայց կը կարծենք թէ այդ՝ յեղափոխական ժողովուրդի մը ամենատարբական բաղադրանքներէն մին է:

«Յեղափոխութիւնը՝ ժողովրդի տնտեսական վիճակի քայքայման անմիջական աղբեղութիւնն է», շարունակ քարոզուեցաւ մեզ: Բայց ոչ որ մինչև այսօր յստակօրէն պարզեց թէ ի՞նչ է անհատի գիշերայդ հոգու մէջ: Փոքրիկ տնտեսութիւն մը մեր յեղափոխական պատմութեան վրայ պիտի արդարացնէ մեզ:

Երբ ժողովրդի մը վիճակը անտանելի է առաջ կուգայ դժգոհութեան ծայրեր: Այդ շարժումն կ'օգտուին ձեռնհաս, կարողութեան տէր զեկավարներ, կամ փառասէր, եսամոլ, բախտախնդրներ: Մենք ունեցանք միայն երկրորդ դասակարգի պատկանող յեղափոխական վարիչներ, այսինքն՝ փառասէր, եսամոլ, բախտախնդրներ և փոխանակ այսպիսիներ բացառութիւն մը կազմելու մեր յեղափոխական ասպարէզի վրայ, հազիւ երբեմն անկեղծ, պարտաճանաչ յեղափոխականներ զիստօր աստղի նման երեացին այդ րո-

նկու գործ մը կատարել միայն կրնայ ուղղութիւններ, կարծիք եւն. տալ Անա Յեղատիտական Միութիւն մը՝ մի սիրտ, մի արիւն և մի գլուխ: Անաճը կ'ըսէ. «Եթէ նաու մը պետք չառ ըլլայ, այն նաւը չուտով կ'ընկնի»: ուստի մենք այ պէտք է որ աշխատինք՝ միակ, բայց զօրաւոր, հանճարեղ և փորձառու նաւագետ մը ունենանք: Բայց հա-կառակ այս ամեն փափագներու, այն անձը որ չուզիր միանալ, դա-ւաճան և ազգին ամենէն մեծ թըշ-նամին է:

Արդի վիճակն անցեալին վրայ յառաջդիմութիւն մը չէ ըրած եր-բեք. ճիշդն ըսելով նոյն իսկ ետ ետ տարած է: Եւրոպական դաճ-լիճներն ալ մոռցան գմեղ. ամենքն ալ իրենց ըստին կը նային: Մե-րիներն լսեա՛ կեղծաւոր, իսրաէ-րայ . . . ո՛ր մէկ աղեկութիւնն իս-յիւն մ'է, Հոս, Իսրայիլ մէջ «Հայ Ու-սանողաց Հայրենասիրական Միութիւն» անուանով ընկերութիւն մը ունեւիւր, որուն նպատակն էր Հայ-կակա՛ն Դաւոթ պաշտպանել Եւրոպա-յի մէջ՝ կարելի եղած ամեն մ ջնջ-ներով: Այս կարեւոր ընկերութիւնն ալ հիմա բոլորովին լուծեալ վիճակ մը ունի, իր անդամներն ազգին ան-գին ցրուած, ոմանք մի կ'ան, ո-մանք հրաժարած. իսկ ոմանք ան-տարբեր իրենց գուարճութիւնները կ'ենեն բարեգոհիւններու հետ: Յի-րաւի, ցաւալի՛ վիճակ . . . Սինդի-անդին Հայութիւնը բոլորովին ջըն-ջուելու մօտեցած է:

Կ. ԳԱՂԱՍՏՅԻ

ԱՊՐԱՆՈՒԹԻՒՆ ԹԵ՛ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

ԼԱՌՆԵԼԻԱ, (Կիպրոս) 13 նոյ.

Ո՛րչափ ցաւալի, նոյնչափ և զար-մանալի է, որ Հայ Յեղատիտական գործին կամ անոր մօտիկ յիշատակ-ներու մէջ գեա՛ կը գտնուին անանկ անձնաւորութիւններ՝ որք կը ջանան նսեմացնել կուսակցութեան մը ա-նունը և ստորնացնել անոր վարկը ժողովրդին մէջ: Այս դասակարգէն է նաև Կիպրոսի Լաուրա քաղաքէն «Միութիւն» 15րդ համարի մէջ Պ. յօդուածագիր Կ. Ն.

Յաւայի է կ'ըսենք, որովհետեւ այդ յօդուածով Պ. Կ. Ն. կը ջանայ վար գարնել մի մարմին, որը մի-նակն է միացած գործիւն. յեղափա-խական ասպարէզին մէջ ազգային դաւոթ պաշտպանելու:

Յօդուածագիր պարոնը շատ լաւ գիտնալով որ գէնքեր հոս բերողը պարսիկ ներկայացուցիչն է ինքզին-քը, կ'ընէ և անգաղտնապահութիւ-նով ամբողջ աշխարհի կը յայտնէ որ այն անձը Դաւանակցական մըն է: Այս գաղտնիքը, որը ո՛չ միայն յե-ղափոխականին նուիրական է, այլ և ամէն մի Հայուն որ ազգային ար-ժանապատեութիւն ունի: Ուստի և թող չգործադնեն ընթերցողները, երբ յօդուածով վերնագիր տեսնեն «ա-պ ու ը ու թ ի խ» թէ մ ա տ-ն ու թ ի խ:

Դաւանակցութիւնը իրեն կուսակ-ցութիւն մի հարուած աւելի կը կրէ իրեն ուղղուած թշնամանքներու եւ զբաղաւորութիւններու մէջ, սակայն և ոչ մէկ իր նպատակին կը հասնի: Այս պարագային փաստողը միայն յեղափոխական գործն է, մինչդեռ Դաւանակցութիւնը կուսակցական տե-սակէտով, շատ արելի կը բարձրա-նայ, երբ տարածութի թէ «նա գէն-քեր ունի գործին յատկացած. ըս-կանալ Պարսկաստանի սահմանէն ոչն-չեւ Կիպրոս»:

Իսկ որ գլխաւորն է, սխալ է և այն որպէս թէ, «երկու սնտուկ (80) հրացանները մաքսատան մէջ գրաւուեցան»: Զէմարիտն սա է որ հրացանները բռնուած են յունա-կան շոգենաւի մթերանոցին մէջ, և որչափ յայտնի է, այդ եղեր է մասնութեամբ. իսկ մասնութեան դէմ «ստտուածներն անգամ անկա-րող են կուռիլ», կ'ըսէ մի փիլի-սոփայ:

Եւ չնայելով որ այս յիշու-րանքներ որոշ դիտումով իրարու քով չարուած են, դարձեալ մենք կը աստանինք պատասխանել թէ որն է աւելի հաւանականը՝ «պարտու-թիւն» թէ մասնութիւն:

Պ. Յօդուածագիրը խրատներ կը կարդայ, որ ցուցամուտքենէ հե-ռու մնա՛ յեղափոխականները, ո-րովհետեւ «թիւք կառավարութիւնը իր բարեկրոր արթնուն աջերով ան-քթիթ մեզ կը գիտէ». խեղճ թշուա-ռականը . . . Ո՛չ, թիւքը կարիք չունի մեզ գիտելու և հասկնալու մեր շարժումները. եթէ մենք անխոհեմ չըլլանք:

Մ.

Պ. Մ. Կիպրոս գէնքերու փո-խադրման համար մեր թղթակցին գրութեան վրայ ծանրանալով մա տ-ն ու թ ի խ ն կ'անուանէ, առանց գիտնալու հեղինական և թրքական մամուլը աղմուկը այդ առթիւ, ո-րոնք առանց Դաւանակցութեան ա-նունը յիշելու գրած էին Հայ յե-ղափոխական կուսակցութեան մը կողմէ գրելով, մեր թղթակցը մեղաւոր է այդ անունը յիշելուն համար:

Պ. Մ. մոռցա՛ւ արդեօք պարս-կա-թրքական սահմանի արշաւանքը, որուն համար «Դրոշակ» պանծա-նօք կը հրատարակէր Ֆ. Է. դ ա յ ի-նքու պիտուած ներս մտնելը, յայ-տարարելով թէ «թիւք կառավա-րութիւնն ուղղութիւն չայ թող հրա-կէ. մեր գիտնալ է ա յ դ ու կները ամէն կողմերէ կրնան ներս մըտ-նել»: Այսինքն կառավարութեան ուղղութիւնը կը հրաւիրէ որ ու-րիշ անգամներու համար աջերը շրո բանայ: Միթէ այս անուղ-ղակի մասնութիւն մը չէ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանի ազգային թեր-թերութիւնը որ ըստ օրէ կը ստուա-րանայ: Վերջին տարիներու դաւա-ճակի եղբւրթիւնները Հայ գաղթա-կանութեան թիւը ամէն օտար եր-կիրներու մէջ զգալապէս բազմա-պատկեցին: Բնական է որ հազա-րաւոր ազգայինք իրենց գտնուած տեղերը ինչպէս կը ջանան նիւթա-կան պաշար հայթայթել, նմանապէս պէտք ունին մատակարար պաշարէ ալ գուրկ չմնալ: Մատակարար զար-գացումն է որ պիտի լուսաւորէ դի-րենք, պիտի ճանչցնէ իրենց նիւ-թական և բարոյական պարտակա-նութեանց եղանակները: Այս պայ-մանները արտաբերող լրագրութիւ-նը կրնայ ըլլալ մասնաւոր մի-ն ազգին համար, որ մեծամասամբ հա-զիւ դպրոց՝ երես տեսած մեր նախ-նական ուսումը կէս-կատար թո-ղած հեռացած ենք գիտութեան լու-սաւոր ասպարէզէն, զուրկ մնացած ենք աշխարհիս բոլոր նախնիքի վայելչութիւններէ և բարեկեցու-թենէ: Ուստի և ասիկա դասա-կարգի պատկանողներու համար է, որ դժբաղդաբար ազգին մեծա-մասնութիւնը կը կաղնենք, ո՛չ նիւ-թական ո՛չ բարոյական շահերնիս պաշտպանելու միջոցները գիտենք և ոչ ալ մեր ազգասիրական պարտա-կանութիւնները կատարելու եղա-նակները և անոր օգտակարութիւնը կրնանք ըմբռնել. այլ իրեն կոյր հետեւողներ գործիք կը դառնանք՝ այս կամ այն պատշաճութիւն, և ան-փորձութեամբ թէ՛ մենք մեզ թշուա-ռութեան կ'ենթարկենք և թէ մեր ազգային շահերուն անուղղակի կեր-պով փնտաւար կը դառնանք:

Մեր տգիտութեան հետեւանքով անտարբեր կը գտնուինք ազգային ո՛ր և է բարեգործական ձեռնարկե-րու մէջ: Մեր դասին կը պատկանին նոյն իսկ բազմաթիւ ազգային հա-րուստներ որոնք ո՛չ դպրոցներու, ո՛չ լրագրութեան կարեւորութիւն կու տան և ո՛չ թշուառ որբերու կո-ղերմին. միայն անունով Հայ մնա-ցած են, կարծես անասուններու պէս

աշխարհ եկած են միայն ուտելու, խմելու և իրենց անձնական շահերը պաշտպանելու համար:

Մեր տգիտութեան՝ կը վերա-գրենք այն ազգաւոր արտը՝ որ գը-րիթէ բոլոր երկիրներու ազգայնոց մէջ մուտ գտած և արմատացած է: Ու և է երկրի մը մէջ սակաւաթիւ ազգայինք իրարու հետ չեն համա-ձայնիր, իբր օրերիմ թշնամի դի-րար կ'ատեն, կ'արհամարեն և կը հայտնեն առանց բանաւոր պատ-ճառի. շատ անգամ ալ դրար նիւթա-պէս փնտաւար իսկ կը ջանան առանց այդ պարագայէն օգտուելու: Սոյն տխուր իրականութիւնը կը խոտո-վանին նաև Ամերիկայի, Պուլիա-րիայի և Ռուսիայի զանազան քա-ղաքներու մեր թղթակցները: Այս բոլոր ազգամիտ թերութիւնները լրագրութիւնը միայն կրնայ բառ-նալ, եթէ կարեւորութիւն ընծայուի անոր և միեւնոյն ժամանակ նիւ-թական և բարոյական քաղաքու-թիւն չզգացուի ժողովրդին կողմէ:

Ամերիկայի Հայ գաղութը պիտի օգտուի նոր լոյս տեսած երկու թեր-թերէն «Տիգրիս» և «Եփրատ» ա-ռաւելը շաբաթաթերթ, երկրորդը՝ կիսամիտ, որոնց մի քանի թի-ւերը չնորհակալութեամբ ստացած ըլլալով յաջողութիւն և յարաւու-թիւն կը մարթնեն: Մեծայայտ ենք թէ մեր գրած արդարացի տողերը ամերիկան Հայ հասարակութիւնը նկատի առնելով պիտի փութայ ա-պահովել այդ ազգօգուտ թերթերու ղեկավարները:

ՈՂԲԵՐԳՈՒ ՀՐԱԽԻՐԱԿ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

Շնորհակալութեամբ ստացանք Միքայէլ Պերճի (Երկրագի) հեղինա-կութեամբ՝ Վառնա Արեւելեան Տը-պարանէ ի լոյս ընծայուած «Ող-բերգու Հրաւիրակ Բարձր Հայոց» մակագրեալ գրքոյկը:

Սոյն հատորիկը, որ կը բաղ-կանայ 48 էջերէ, կրօնական ներ-ճնշուածներով տողորուած սրտի մը արտաբերութիւնն է, որով հեղինակը երկրա գաւառի՝ Հայրենիքի այդ կարեւոր վայրի տեղագրութեան մա-սին գնահատելի ծանօթութիւններ կուտայ, և յուզիչ յիշատակներ կը գարթուցանէ զայն ընթերցող Հայ սրտերու մէջ:

Կը յանձնարարենք ամէն Հայու կարգալ աոյն գրելով, որ կրնայ գոհացուցիչ թեթեւ գաղափար մը կարգել տալ այդ պատմական վայ-րերի վրայ տեղագրական տեսակէ-տով:

Հնչական կուսակցութեան օր-գան «Մարտի» Ծրդ համարի մէջ կը կարդանք, որ Յունիստ ամէն ըս-կանալ «Նոր Կեանք» անունով կիս-ամսեայ հանդէսի մը հրատարակու-թեան պիտի սկսի Լօնտօնի մէջ նոյն կուսակցութեան կեդրոնի կողմէ:

Նոյնպէս Եգիպտոս հրատարա-կուած «Փարոս» թերթը յայտարա-րած՝ ու մեր ստացած նամակներու նայելով Բարեկի ուսանողները նոյն ուստանին մէջ Հայերէն նոր թերթի մը հրատարակութեան պիտի ձեռ-նարկեն եղբւր:

Վ Բ Ի Պ Ա Կ

«Միութիւն» 14րդ թուի նամա-կատու փի բաժնին մէջ փոխ. Պոմպայ — Կ. Տիմոթէոս գրելու Յ. Ալիք-սանեան գրած ենք, որ խմբագրու-թեան ծանօթ ուրիշ բաժանողը մըն է:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Հնդկաստանի Պոմպայ քաղաքէն շնորհակալութեամբ ստացանք 40 ֆր. որուն կէսը պ. Տիմոթէոս վճարած է և կէսն ալ տեղւոյն ազգայիններէն հանգանակած է:

— Նմանապէս շնորհակալութեամբ ստացած ենք Պուլի. Սիլվէն քաղա-քէն պ. Ս. Էն 8 բուպի ուսանական թղթագրամ:

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Սիլվէնի «Հայ Յեղ. Դաւանակ-ցութեան Օժանդակ Կօմիտէ» աղ-նիւ ընկերաց հրաւիրանք արտա-սահմանի ազգայնոց ուղղութիւնը կը հրաւիրենք զգուշանալ կարգ մը ինքնակոչ այն միութեանակներէ՝ որոնք առանց իրենց կազմակերպու-թեան գ ո յ ը ցոյց տալու և դի-րենք հրապարակաւ ճանչցնելու կը համարձակին 4-5 ֆրանքոց կնիք մը չինել տալով մտնել խեղճ ժո-ղովրդի մէջ դրամ կորզելու համար: Այս օրինակ շահատակութիւնը մի-ն և ե՛րբ պիտի տեսնեն վերջապէս: Այլեւս բաւական է աղքատ ժողո-վուրդը մեր խաբէութեանց դո-հել:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Պ. Ս. Մանիկեան կը խնդրէ թերթիս միջոցաւ յայտնել հրապա-րակա իր սրտագին և անհուն ջը-նորհակալութիւնը առ պ. Գ. Ե. Ե-կէնեան ու իր ընտանիք իրենց այն ազնիւ ու անմոռաց խնամոց ու հոգածութեան առթիւ, զորս ունեցան իր մօրեղբորորդի ողբա-նալ ՆՇԱՆ ԲԵՇԵՆՆԻՍԻ հիւանդու-թեան միջոցին, և առ պատուա-րժան մասնաճիւղն Գահիրէի ու այն բազմաթիւ անձնաւորութիւնն, որ յիշեալին յուզարկաւորութեան տը-խուր հանդէսը փառաւոր ընկելու մասին մեծ ջանք ու զոհողութիւն-ներ ընել չեն զրացած:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրութեան կողմէ կը խնդ-գրուի այժմ մի Պուլիարիա բնակող պ. պ. Հայկազ Զաքարեանց Վա-նեցի և Տրատ Հայկազեանէ Ռու-սոսթոյն, և Թիֆլիս բնակող Տրա-պիդոնցի պ. Նիկողոս Իսրայէլեանէ, որ Հաճին ուղարկել խմբագրու-թեան իրենց հասցէները, զորս պիտի հաղորդեն իրենց ընկերնե-րուն ի Գերմանիա:

— Կը խնդրուի նաև Պուլիարիա բնակող Չ. քաղաքացի պ. պ. Միտիչ Սուբասեանէ (Կոչկար) և Լ. Ներ-սէսեանէ (սօսպի), իրենց հասցէ-ները՝ հաղորդելու համար իրենց բարեկամ Կ. Ներսիսեանցի:

Սեբաստիոյ Լիսաւը գիւղէն պ. պ. Բարսեղ Արմաղանեան, Յով-հանէս Ծաքարեան և Սահակ Ե-ղիանեան թող փութան իրենց հաս-ցէն տալ խմբագրութեան:

Սերպիոյ, Պուլիարիոյ և Ռուսա-նիոյ կառավարութեանց նամակա-տուները որովհետեւ Յունաստանի համար փոսթ-մանտաթ չեն ընդու-նիր, խմբագրութեան դրամ զրկելու դիւրութեան համար կը խնդրենք յիշեալ երեք տէրութեանց երկիրնե-րը գտնուող ազգայիններէն, որպէս զի այսուհետեւ հաճին իրենց բաժ-նեկները և այլն զրկել հետեւեալ հասցէին յորմէ ապահովապէս կը ստանանք:

Monsieur
Manouk Krikorian
Kazarma Pomperilor
KUSTENTZE
(Roumanie)

ՆԱՍԱԿԱՏՈՒՓ

ԲիրձՈՍ—պ. Ա. Մ. տեղը Եօռ-դի անուն Հայ չգտնուելուն վերա-դարձուած թերթը շնորհակալութեամբ ստացանք:

ԳՐԶՈՒ—Լստ Ձեր յանձնա-րարութեան թերթերը այս ամիսն սկսեալ կը զրկենք, ներկայ հասցէով եթէ ապահովապէս ստանաք պա-տասխանեցէ:

ԳՕՄԻ.—Թիւօղ պ. Գ. (Վաճա-ռական), երեք ամիսէ ի վեր թերթ կը զրկուի ձեզ արդեօք ձեռքերնիդ կը հասնի՞ գրեցէք:

ԲԱՐԻԶ—պ. Մարթին, պատաս-խանդ և թեթեւեղ զրկեցիք ստա-ցած էք:

ԲԱՐԻԶ—պ. Գաղատացի, նամա-կըդ գտացած և առաջարկդ կատա-րած ենք:

ՈՒԺԻԶ—(սերպիոյ) պ. Ուսանող նամակնիդ ստացանք և ձեր գրածին մեր շնորհակալութիւնները:

ՍԵՒՄՈՒՊ. Գ. քաղաք— Գառ-թերթիդ ստացանք և մեր պարտակա-նութիւնը լիուրի կը կատարենք:

ՅՈՒՐԵՆ—պ. Ռ. Թ. Ձեր նա-մակը շնորհակալութեամբ ստացանք, Ձեր թանկագին կորստեան համար մեր ցաւակցութիւնը: Զեկրատովիչի հաոցէն անձանթ ըլլալուն, վերա-դարձուած թերթը ստացանք:

ՏՕՊՐԻԶ—Հայ երկու. Միութիւն, ըստ Ձեր խնդրանաց վեցամսեայ հա-մար օրինակ մը իբր նուէր կը զըր-կենք Ձեզ:

ՎԻՏԻՆ—պ. Մ. Ե. Ձեր գրու-թիւնը ստացանք և նկատի առնել:

ԹՐՈՅ—պ. Հ. Ե. Ձեր յանձնա-րարութիւնը կը կատարենք, բայց պատասխանը օրերու կարօտ է:

ՓԻՋՔՕ (Զուլիցերիա) Ձեր ուղածը յաւուարի վերջը:

ԲԱՐԻՎՈՒ—պ. Մ. շնորհակա-թեամբ ստացանք Ձեր նամակը, յետ այսու կանոնաւորութեամբ կը շա-րունակենք:

ՅԻԼԱՏԵԼՅԻՍ—պ. Մ. բաժնե-գինը և նամակը ստացանք, Ձեր ցոյց տուած համակրանաց մեր խորին շը-որհակալութիւնը:

ՍԻԼԻՍՏԻԵ պ. Սրատես, Ձեր գառթը ստացանք, եթէ կարելի է ուրիշ մը գրեցէք աւելի որոշ իմաս-տով, որպէսզի յաջող թու՛մ հրա-տարակենք:

ԲԵՕՍԹԵՆՆԵ՛ պ. Ս. Մ. Ձեր նա-մակը ստացանք, ըստ մեր ծոռեցման կարող էք վճարել տեղը պ. Մ. Գրի-գորեանի:

ՎԻԼԷԼՄՍՏՐՈՒՄ—պ. Ղ. Մ. նա-մակը ստացանք յետ այսօրիկ երեք թերթ աւելի կուղարկենք Ձեզ, որ-բերուն համար:

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ—պ. Վ. Թ. գառթը ստացանք, մեր խոստացածները հա-զիւ 15 օրէն կրնանք զրկել:

ԿՈՎԿԱՍ—պ. Թ. Ձեր յանձնա-րարութիւնը կատարեցիք, ուղածդ զրկեցիք եթէ չէք ստացել գրեցէք: ՊՕՍԹՈՒ—Համակրայիդ նամակը ստացանք և Ձեր առաջարկը կատա-րեցիք:

ԼՕՎԵՆՍՈ—պ. Ազգանալ բաժնե-գինը ստացանք և 13րդ թիւը զըր-կեցիք:

ՍՈՒՐԻԱ—պ. Ա. Փ. նամա-կըդ ստացանք Ձեր գրածները սխալ են, մեր թերթը ըլլալու չէ:

ՍԵԻՄՈՒ—նամակը ստացանք և Ձեր բաժնին համակրայեցանք, թերեւ իրաւունք ունիք:

ՍԼԻՎԷՆ—պ. Թ. եազդը լարը-նըդ կէնէճէք նիւսթէմիզտէ տէրճ իտէճէճիդ:

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ—պ. Բազէն, գրութիւնդ նկատի առած ենք, յա-ջող թուով:

ԴԱԻԻԺ—պ. Թ. գրութիւննիդ ստացանք, բանի մը օրէն կը սպա-սենք խոստացած նոր գրութեանդ:

ԲԻՆԱԲ (Պարսկ.) պ. Աստման նամակը և տետրակը ստացանք: Ձեր յօդուածը յաջող թուով իսկ անտ-րակի մասին ի մօտյ մասնաւոր նա-մակով կը գրենք, առաջարկդ ըն-դունուած է:

ՆԻԹԵՐՈՒ առատութեան պատ-ճառով շատ տեղերէ մեծ ստացած թղթակցութիւնները յաջող թիւով:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ» ԱՌԵՆՔ, ՀԱՅԿ. ԱԶՍՏ ՏՊԱՐԱՆ

ՆՃԱՆ ՊԱՏՈՒԿԵԼԻ ՔԵԺԻՇԵԱՆ (ԲԻԻԶԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ)

1867-1897


ԳՈՅԺ ՄԵՐ ԴԱՐՁԵԱԼ ԵՊԻՊՏՈՒՆ

Փարաւոններու երկիրը, Հին բունական շախարհը, ժամանակի հակադրութեան շնորհիւ, ազատ ապաստանարան դարձաւ ազատութեան կարօտ մարդերու, զորս համարական բունականութիւնն հարածից ու դեռ կը շարունակէ հալածել: Այդ երկիրն եղաւ նաեւ յաւիտենական քրեա-
րանն այն մի քանի նշանաւոր ու վաստակաւոր յեղափոխական ընկեր-
ներուն, որոնցմէ էր ՆՃԱՆ ՔԵՇԻՇԵԱՆ, որը՝ հակառակ իր վաղի կողմ-
մին՝ յեղափոխական աս-
պարէզի մէջ ունեցած
արտակարգ գործունէ-
ութեամբն՝ բայցայեց իր
առողջութիւնը անդար-
մանելի կերպով, կնքեց
իր արգիւնաւոր կեան-
քը ի Գահիրէ, 97 զեկ-
տեմբեր 6ին:

Նշան Քէշիշեան ծնած
է Հին Միջագետքի, արդի
Գարա-Չայի, Փոքր-Ար-
մատան գիւղի մէջ, ար-
ժանաւոր շառաւիղ մի
բարեկեցիկ ու նշանա-
ւոր գերդաստանի: Նա
վեցամեայ ի հօրէ կը
գրկուի, ու իր ծերունի
պապիկի գորովանք ու
գութութեամբ կը մեծ-
նայ ու կ'ուղարկուի Պա-
լէստին, ուր իրեն շատ մեծ-
նաւոր ազգականի մը՝
խնամակալութեան տակ Ղալաթիոյ Ս. Լ. ուսումնոյցի Ազգ. վարժարանը գրուե-
լով կ'ստանայ նախնական ուսումը ու կը վերադառնայ իր ծննդավայրը:
Պատանի Նշանը՝ տակաւին ուսանող ու հազիւ 13 տարեկան, չընտմիր
պատանեկան համայնքին՝ օրուան ուստիսի համար յատկացուած շատ չա-
փաւոր գումարէն օրական մաս մը խնայելով, գումար մը կը գոյացնէ, ու
անով գիւղին աղքատիկ ուսանողաց
համար մի փոքրիկ անուուկ դասա-
գիւղեր կ'ուղարկէ, այդ կը լինի
գրականին իր բնութեան ու
փայլուն անձնութեան ու գոր-
ծունէութեան, զորս ունեցաւ իր
վարժապետ եւ իր գործիչ յեղափո-
խական ասպարէզին մէջ:

Նա ամուսնացաւ գրեթէ 16-17
ամեայ, ու մինչեւ 1888 թուական
մի քանի անգամներ գաւառէն ի
Պոլիս ու անկէ ի գաւառ երթեւե-
կելով իր անձնական գործերով ըզ-
բաղեցաւ, և 1888-89ին վարժապետ
լինելով իր ծննդավայրին մէջ շա-
րունակեց մինչեւ 90-91 թուականը:
Մինչև իր վարժապետութիւնը, գիւ-
ղին դպրոցը կը կառավարուէր ա-
ւանդական Հին գրութեամբ, իր օ-
րով գպրոցը իսկական կը համա-
պատասխանէր իր անուան: Տա-
լաւ ա ի, թաթի ու ասոնց
նման տմարդի անգութ պատիժներ
կը բարձուի զպրոցէն՝ իբրեւ բան-
տէ ու գործիք խուսափող ու խորտ-
չող գեղջուկ ուսանողներն կ'սկսին
մի նոր ու արտասովոր եւանդով
ու սիրով յաճախել այդ մտաւոր ու
բարոյական զարգացման սրբավայրը:
Վարժապետը՝ որ մինչև այն ժա-
մանակ գահճի մը երեւոյթն ունէր
գեղջուկ ուսանողներու համար, իր
նորոգվել ու ասեղի երեւոյթը կը փո-
խէ, և նա կը լինի սիրելի ու հա-
մակերի բոլոր սանիկներուն: Նշան
Քէշիշեան ժառանգեց պատու եւ
լի անունը վարժապետութենէն ու
այդ անունով կը ճանչնան զինքը
բոլոր իր ծանօթներն ու կառավա-
րութիւնը:

1890ի սկիզբները Հնչակեան յի-
ւախփոխակ, կուսակցութեան անդա-
ռելի առաջնորդ Սայր-Երկրի այլ
և այլ կարեւոր ու ծովագետաց գա-
ւառներն Միջագետքի եւ իր շրջակայ
հայաբնակ գիւղերն ալ ունեցան ի-
րենց արժանաւոր առաջնորդ Նա-
յոյը հայաբնակ գիւղերու մէջ, յեղա-
փոխական տեսակէտով ներկայան
ու բարոյական շատ պատրաստ ոյ-
ժեր գտնալով, կարճ ժամանակի մէջ
կատարեց մի տարրական կազմակե-
րութիւն ու հեռախոս անկէ, տե-
ղական բոլոր գործերը վարելու ի-
նքուրութիւն տալով տեղական մաս-
նաճիւղին, որուն վարչիներն էին



Որոշակաւ Նշանը 1890-ականներու
համար մի քանի անգամներ
գաւառէն ի Պոլիս ու անկէ ի գաւառ
երթեւեկելով իր անձնական գործերով
ըզբաղեցաւ, և 1888-89ին վարժապետ
լինելով իր ծննդավայրին մէջ շա-
րունակեց մինչեւ 90-91 թուականը:
Մինչև իր վարժապետութիւնը, գիւ-
ղին դպրոցը կը կառավարուէր ա-
ւանդական Հին գրութեամբ, իր օ-
րով գպրոցը իսկական կը համա-
պատասխանէր իր անուան: Տա-
լաւ ա ի, թաթի ու ասոնց
նման տմարդի անգութ պատիժներ
կը բարձուի զպրոցէն՝ իբրեւ բան-
տէ ու գործիք խուսափող ու խորտ-
չող գեղջուկ ուսանողներն կ'սկսին
մի նոր ու արտասովոր եւանդով
ու սիրով յաճախել այդ մտաւոր ու
բարոյական զարգացման սրբավայրը:
Վարժապետը՝ որ մինչև այն ժա-
մանակ գահճի մը երեւոյթն ունէր
գեղջուկ ուսանողներու համար, իր
նորոգվել ու ասեղի երեւոյթը կը փո-
խէ, և նա կը լինի սիրելի ու հա-
մակերի բոլոր սանիկներուն: Նշան
Քէշիշեան ժառանգեց պատու եւ
լի անունը վարժապետութենէն ու
այդ անունով կը ճանչնան զինքը
բոլոր իր ծանօթներն ու կառավա-
րութիւնը:

Սոյն միջոցին, Պատուելին իւր
անձնական գործերու կարգադրու-
թեան համար 91 թ տաւոր Պոլիս
կուգայ, իր գործերու կարգադրու-
թեան հետ գործընթացաբար կը կա-
տարէ հարաւորին կենսական շատ
գործեր. կայքէջէ շատ ծանօթ ու
անձնօթ տեղեր, ու զանազան խոմ-
բերու կազմակերպութեանց հիմը կը
դնէ, այն խումբերուն, որոնց ի վեր-
ջոյ պոլսոյ Հնչ. կուսակցութեան
կարեւորագոյն ու մեծագոյն խումբե-
րն եղան:

Պատուելին պոլիս եղած միջոցին
խումբերու կազմակերպութիւններէն
շատ, ունեցաւ զէնք փոխադրելու
երկու կարեւոր ձեռնարկներ, որոնց
մին յաջողեցաւ իսկ միւսն վտանգ-
ուեցաւ դաւաճան մի քանի հայերու
մատնութեամբ. սակայն նա իր սո-
վորական ճարպկութեամբ մի քանի
օրուայ հարցաքննութիւնէ յետոյ ա-
զատ կ'արձակուի կիրառանի մէջ,
ուրիշ կը վերադառնայ իր ծննդա-
վայրը:

Փառաւոր մէջ տեղի ունեցած
յեղափոխական շարժումներն ու

զէնքերն աննկատ չ'մնացին վեր-
ջագոյն կառավարութեան կողմէն:
Այդ ժամանակէ սկսեալ մին-
չև իր փախուստը հանրահռչակ Ար-
խանանի քանիցս ձերբակալուելու
կացութեան մէջ գտնուելով մեծ կալ
գումարներով յաջողած էր աղատել
սովոյն այլ ևս գրաւ տալէ ձանձ-
սացած, կարող է իոյս տալ կատա-
վարութիւնն և շատ կանուխէն երա-
զած հրոսակները կազմել:

Առիւծախորտն Արխանանի քաղ-
ուած էր մի լեռ, ուր իր ծանօթնե-
րէն շատեր կ'այցելէին անոր, որոնց
մէջ էր նաեւ Պատուելին: Այդոյ ըն-
կերներն ու ծանօթներն մէկի մէկի
հրաձեւ տարով կը հեռանան, ու
ամենէն վերջը կը մնայ Պատուելին,
որը իր առիւծն ընկերէն թափուե-
լու կամ չ'թափուելու հոգեկան դա-
ւաճ յայտնուի մէջ խորատուգրած մի
անվճարականութեամբ: Կը տատանուէր
Գիւցաղի ընկերը թափանցելով անոր
հոգեկան տագնապներուն, որոնց
վերջ տարու նպատակաւ, հետեւ-
եալ հարցումը կ'ուղղէ անոր.

— Պատուելի, զիս մի՞նակ պի-
տի թողո՞ւ:

— Եւ քեզի հետ եմ. ու անոր
ման բնէ, թէ ի կիսուս և թէ ի
մահ, կը պատասխանէ:

Աւելի թան մի քաղ ի քաղ Հե-
ռուոր մասուոր. իրեն. այս նուի-
րակաւ ուսար հետեւաւորացէս նը-
կարողը իւր համար: 92ի յունիս
ամէն սկսեալ կը մնան անորո՞ւսն
լինելով լիբան գաւառներ:

Յեղափոխականութիւնը գաւառ-
ուն մէջ մի նորաձեւութիւն, և
կամ աւելի ճիշդն ըսելով, մի նոր
ու ճշմարիտ կրօնի աղաղակաւորու-
թիւնը գարծր էր ստուգիւ, յի-
շախտակաւ բոլորն սիրելին ու
պաշտելին դարձիւ էր, մանաւանդ
այսպիսի ամբիւ մի նուիրումը յի-
շախտակաւ հոգիները Գաւառի
երկրասարդութիւնէն շատեր թախան-
ձապին կը խորհէին միանալ այս տն-
նեւան զոյղին, որը սակայն ապագայ
անպատեհութիւններն ու գոնաւորու-
թիւնները ի նկատի ունենալով չհա-
մակերպուին անոնց բուռն թախան-
ձապին: Եւ անոնք կը շատանան մի-
ոյն այն մի քանի ընկերներով, ո-
րոնք արդէն շատ կանուխէն, զանա-
զան հանգամանքներով կառավարու-
թիւնէն հալածական էին և որոնց
թագաւորն ու ապրումը իրենք կը
հայթայթէին:

Սուրբ կը բաղկանար 6-7 ան-
ձերէ, որուն պաշտօնական պետը
ինք՝ Արխանանէն էր, իսկ ղեկավա-
րը Պատուելին: Սուրբի ներկայու-
թիւնը գաւառի թուրք ժողովրդին և
մի խումբ ապիրատ ու սեւահոգի
հայերու համար սարսափ մը ըս-
տեղծած էր: Անոնցմէ ոչ ոք կրնար
արձակ համարձակ դուրս ելլել, կա-
ցութիւններն շատ սպառնալից էր: Ա-
սոնք զանազան սուտ ու անզոյ գէպ-
քերու ու շարժումներու իբր հեղի-
նակ ամբաստանելին խումբը, զայն
կառավարութեան հալածանքաւ հն-
թարկելու համար, ու արդէն կառա-
վարութեան ուղածն ալ այդ էր:

Մի անգամ զիւզէն քառորդ ժամ
հեռաւոր ձորի մը մէջ 9-10 ոտի-
կաններ կը հանդիպին խումբին, ո-
րին կ'առաջարկէ ոստիկանաց պետը
անձնատուր ըլլալ: Սուրբանի տըխ-
մար, այլ գոռոզ ոստիկանապետը կը
հաւատայ թէ խումբը առանց գի-
մարդութեան պիտի կրնայ գերել,
կարծելով որ սովորական վարժու-
ող ու զէնք չ'իւրոյ խաղաղ հայերը
օսմանցներու քաջարի գիւնդներու
զէմ զէն ի ձեռին գիմարելու և կը-
ւելու համարձակութիւնը չ'պիտի ու-
նենան: Եւ սակայն իրողութիւնը
տարբեր կերպով դուրս կուգայ: 6-7
հարիւր քաղ իրարմէ հեռաւորու-
թեամբ կատարի հրացանաձգութիւն
կ'սկսի. հրացաններու ճարձատրե-
ներ և ձայնէն թուրք ու հայ բազմ
մաթիւ մարդեր գիւնդած կուռն
վայրը կը փութան, որոնցմով կը-
ւող ոստիկաններու թիւը մի քանի
հարիւր կը մտնուայ: Կուռն կը
տեւէ երկու ժամ և օրն արդէն տա-
րածամ, Պատուելին ընկերներու նա-
հանջը ապահովելու համար, կը կը-
քի ու կ'արձանայ հաղի իր իրանը
ծածկող մի քարի ետեւ: Ընկեր-
ը կը գտնէ, բաւական է, դուրս հեռա-

ցիւք ու ինք կ'սկսի գեղանկերու տա-
րաւ մը տեղացիներ բազմութիւն թը-
նամիկն վրայ:

(Շար. յաջորդ թուով)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՏՈՊՐԻՉ, (Պաշտօնաւ) 12 նոյ.

Երբ Պաշտօն աշխարհահռչակ ըն-
պանդանոցէն մաղապուր ճողպարած
ինքզինքին նետեցինք պուկարական
ազատ հոգին վրայ, քան թէ բերկրա-
նով կարողացինք «Հնչակ» թերթին
համակիր ընկերն Դաշնակցութեան
օգուտ. 14ի ցոյցին նկատմամբ Մեր
բոլոր տեսած ու քաղածները մոռ-
ցանք, որովհետեւ հայ յեղափոխ. կազ-
մակերպութիւնները սկսած էին հա-
մակերպուիլ իրարու. հետեւաբար միա-
նային տղ մտաւաւոր կը թուէր: Սա-
կայն ո՞րչափ մեծ եղաւ մեր գար-
մանքը, երբ մենք երկու կազմակեր-
պութեանց միութեան անդամներով
Կ'օրօրուէնք, ահա երրորդ մը ևս
սկսաւ. երեսուն գալ, որուն ան-
գամներն աստ անդ ցրուելով կ'աշ-
խատէին զօրացնել իրենց կազմելը
նոր խումբը. և ինչ խնայել հարկ ե-
ղած տուն մի ու թէ ուն անու-
նով գիմարուորս և մտքովորդին
միմիտ մասն մէջ ստորնացնել մի ու
արդէն գոյութիւն ունեցող կազմա-
կերպութեամբ մարմինները վառնային
մասնաճիւղը՝ Միութեան փափագող-
ներու վարչութիւնն անուանով կ'իւր-
մը յարմարեցնած, սկսաւ Դաշնակ-
ցութեան սպառնալիքներ տեղաւ. և
կոշտ լեզուով մը հրամայել որոշ-
եալ ժամանակամիջոցի մը մէջ մի-
անալ, ապա թէ ոչ. . . Երբ ի-
րենց կը հարցուէր այդ Միութեան
փափագողներու վարչութեանն որոնց-
մէ կազմուած ըլլալը (որովհետեւ ազ-
գեներ իրենք կը ցրուէին) տեղեկու-
թիւն չունենալ կը կեղծէին:

Նոր խմբի տեղան եղող Մարտի
թիւթի մէջ իսկ սկսան ն յիստեղ
Դաշնակցութիւնը: Պ. Սիմիար՝ որ
անցեալ տարի 27 հերոսներու պան-
գը մտնելը համակրանքով մը կը դէր
իր թերթի մէջ (տես «Հնչակ» թիւ
11) իսկ 25 հոկ. 37 թուակիր Մար-
տի մէջ զօրապետութեան փառաբան-
ութիւնը Դաշնակցութեան զէմ գրած
և այլևս «վիճած» գործը սարքող-
ներս կ'անուանէ, բիշ մըն ալ ա-
ռաւ երթալով «անիթի» անակաւորութեան
կ'իւր կողմը ևս անուանելու չը-
չուէր: Ամենէն հայտնեց թերթերն
իսկ պահ մը վարանեցան այդ անու-
նով միմիտ հայկական շարժումները,
իսկ խմբագրի գրազէտ հայու մը եր-
բեք ներքին չէ կարծեմ:

Երբ ճշմարտագոյն միութեան կը
փափագինք, պարտիքն նախ խորհիլ
թէ մեր հայրենիքը բարոյեանդ է և
մենք չուան ենք. պէտք է այս վի-
ճակին դարմանելու համար մեր «ես»
վար գիւնդը, հայրութեան շահը մը-
տածենք, չէ թէ մեր «ես»-ին հա-
մար աշխատիքը ժողովուրդը փճա-
ցնել . . .

Մենք ինչո՞ւ կեցած իւրա կ'ա-
նուանարկենք. փոխանակ անցնալին
վրայ դաժմանական ողբեր կարդալու
և կամ մէկզմէկ բնիապատելու, մեր
սխալները դարմանելու միջոցը միայն
խորհիլքը: Եթէ միութեան գոյացնել
կարելի չէ, զէջ թանաք համարա-
խումբներու գործելու ժամանակ շա-
ղովուրդը քնացնելով ժամանակ շա-
նցնենք. Հայաստան պարպուելու վը-
րայ է, թշուառ ժողովուրդը զրկուած
է ապրելու ամեն մէկ միջոցէ: Եթէ
մենք չունինք գործելու կարողու-
թիւն, ձեռքերինս խցներուս վրայ
գնելով բաւ սեպներ սխալ թէ ուղիղ
գործածելու և ասպարէզ մենք յա-
ջողակներուն թողունք:

Տոպրիւն մէջ կը բնակին 65-70
տուն հայեր, որոնք ունին նորա-
շէն հիւնդերի մը և հիւնդերին հան-
դէպ շինութիւնը հազիւ աւար-
տած վարժարան մը, որուն բացումը
անցեալ կ'արեւելի տեղի ունեցաւ, ուր
ք նի կը երկրասարդներ խոսեցան

ուսման կարեւորութեան վրայ, և
տեղեւոր քահանային պահպանելով
հանդէսը վերջապա Նորիկ ուսուց-
չին և ուսուցչուհիին կը մնայ իրենց
վրայ գրուած յոյսերը յրականացնել,
մատաղ սերունդին սրտին մէջ ար-
ժարելով ազգայնութեան ոգին, ուր-
կէ գորաղը սրբաբ. բողոքովին զուրկ
են իրենց ծնողք, որոնք թրջախոս
են և քիչ մըն ալ օտարամուլ Հայ
զաղթականութիւնը իր օգուտնե-
րը ունեցաւ արտասահման գրո-
նուող ազգայնոց, որոնք հայրենիքէն
հեռու ապրելով տակաւ օտարաշուք
վրայ էին: Հոս բաւական կարող ազ-
գայիններ ունինք, որոնք բնաւ փոյ-
թը եղած չէ նայիլ իրենց գրացի
պուկարներու վրայ և անոնցմէ օրի-
նակ առնել: Եւ միայն անոնցմէ միջո-
ցի տեսայ որ թուրք ժողովուրդի իսկ
ունէր իր ընկերացարանը, միայնիք
ոչինչ, աստ հարկ է լինել թէ տեղ-
ւոյս երկրասարդները (մեծ մասով
զաղթական) «Հայ-երկրասարդաց Մի-
ութեան» անունով ընկերութիւն մը
կազմեցին, որոնց նպատակն է ըն-
թելցարան մը ունենալ, կը յուսանք
թէ շնորհիւ այդ ազգին երկրասարդ-
ներու ախտն ախտաւորութեան մո-
տեքս կ'անուանուր ընթերցարան մը
պիտի հաստատուի: Երանի՜ թէ
տեղւոյս կարող պատակարար Տեա-
ր մի: Նշանի օրինակին հետեւելով մի
քիչ ձեռնադրութիւն ընէր այդ հա-
տատութեանն որ մեծ օգուտներ կը
խոստանայ տեղւոյն թրջախոս Հայ
հատարականութեան:

Տեղւոյս նորիկ դաստատուին բա-
ցակայութիւնը այդ խմբին մէջ աչքի
կը զարնէր, չլիսեմ թէ ինչ պատ-
ճառով կ'ուզէ բողոքովին հեռու մը-
նալ այդպիսի ազգօգուտ ձեռնարկէ
մը, որուն կարծեմ ինք աւելի ոյժ
տալ պարտաւոր է:

ՈՉ-ԿՈՒՈՒԿՑՈՒԹԻՒՆ

ԲԱՄԻՉ, 14 նոյեմբ.

Միութեան գործը յաջողեցնելու
համար Միութեանի 16րդ թիւի մէջ
գծուած Մ ր ա գ ի ր Ե խիստ օրի-
նաւոր և օգտակար կը գտնեմ, զի
քաջ գիտեմ թէ ընթերցանող միւ-
թեանը և խորհրդակցութեամբ մի-
այն կրնանք փրկուիլ այս անկ վի-
ճակէն: Ա՜խ մը ժողովուրդ ենք, ի-
րար կ'ատենք, դեռ ի՞նչպէս օտարը
զեկզ չ'զրոյժանէ, Ամեն կողմ կու-
սակցութիւններ, խումբեր, ընկերու-
թիւններ և այլն: Ամենքն ալ ի-
րարու աջ փոքրու կը նային, ժա-
մանակին, այստեսակ խորհրդերով
կ'անցնեն, միջոցներ անդին ամ-
բողջ Հայութիւնը կորսուելու և
իսպառ ջնջուելու վտանգին մէջ
է: Մէկը կ'ընէ ինչիս խնթ ու խե-
լառ. գործ մը կ'ընէ, առանց սա-
կայն կանխաւ իրմէ աւելի խելացի-
ներուն խորհուրդ հարցնելու. իսկ
անգին հազարաւոր անմեղներ կը
տուժեն: Ասոնց ամենուն առաջ-
քը կ'առնուի միութեամբ և համա-
խորհուրդ գործունէութեամբ միայն:
Փորձը ցոյց տուաւ թէ կեդրոնի մը
կազմութիւնը խիստ կարեւոր է. կեդ-
րոն մը՝ որ ունենայ իր վարչական
անպամներն մի միայն քաղաքագէտ
և հրապարակի վրայ պատուաւոր
ճանցուած անձնաւորութիւններ, և
որ պատժն ունենայ միայն ծրա-
գիրներ պատասխել և դրամ հա-
քաւել: Այս կեդրոնական վարչու-
թեան մէջ պէտք է գտնուի ազ-
գին է՛ն սիրելի անդամներէն մար-
դիկ՝ վստահութիւն ներշնչելու և
բոլոր միւս այլ և այլ խումբերու,
կուսակցութեանց, ընկերութեանց
արժէքը և ազդեցութիւնը կորսելու
համար: Կեդրոնական վարչութիւն
ըսելով երկրորդ նազարէկեան օ-
ճաւ ինչիս Բուն երկրին մէջ գոր-
ծող մարմինները պէտք է վէ գ օ ի
իրաւունքն ունենան: Զօրօրնակ
Կեդր. վարչութիւնը որոշում մը կու-
տայ, բայց այդ որոշումն գործադ-
րութիւնը պիտի կարենայ մերժել
երկրին մէջ գործող խումբն, եթէ՛
պարագաներու մօտէն ծանօթ ըլլա-
լով օգտակար չ'գտնէ զայն: Սակայն
այս խումբը, պէտք չէ ինքնիրեն
առանց կեդրոնին խորհուրդ հարցը-

խնայողն միջնորդութիւնը վրայ, որովհետեւ զօրաւորին ճնշման տակ չըբացան: Այդ միակ սկզբունքը որ մենք կը կարծէինք թէ պէտք է բարոյագործել հայ ժողովրդին. այս րտականութիւնն էր, կատարուեալ յախի լինելու: Զարմանալի բան, ես դժգոհ եմ իմ վրայ ծանրացող ձեռքին և չկարենալով տանիլ այդ ծանրութիւնը. կ'աշխատիմ ոչնչացնել և կամ նա զիս կ'ոչնչացնէ: Ուրեմն ես կը կոտորեմ իմ բարոյն համար, ալ ինչ իրաւունք ունիմ ընկերներէս, բարեկամներէս և հասարակութենէն անկախել որ մեծարեմ, փառաւորեմ, անմահանամ: Մեր խաղը գործիչները մոռցան այդ կէտը և փոխանակ ժողովրդին բարոյները, որ երբ կը մեռնէ կուտի դաշտին վրայ իր ազգային պարտականութիւնն է որ կը կատարէ, և ոչ թէ իմ և քու խաթնը: Համար կը թափէ իր արիւնը:

Փառասէքը եսամոլը, իր վրայ չափեց ժողովուրդը և իր չափովը նաեւ բարոյեց ժողովրդին: Նա որ կամէր մը արեւն կամ վայրկեանական գործ մը տեսաւ, ըսկաւ. ապրիլը չորս բանալ, փառք ու պատիւ որոնել: . . . Դուք իրիտ շատ էք յեղափոխական թղթակներ և կը գտնուիք հասարակական տոկոս յիշ. կուտակցութեանց մէջ:

Աստիճակ մէկը, . . . (*) այսօր 200 ֆր. ամսաթոշակով Դաշնակցականներու վարկան կը դառնայ և կը կուտակ Մարտիկներու դէմ. . . Եւս մը Ամերիկայ կ'ազգայ տիրելու, միապետարար իշխելու իրը Դրօշակեան արտասահմանի ներկայացուցիչ Դաշնակցական կոմիտէներու վրայ, գործնականապէս արդարացնելու ապակե դրոշմացման ուղղութեամբ: Իսկ այստեղ իրը նշանաւոր յեղափոխական . . . մը իրեն թոյլ կուտայ ամեն կեղտոտութիւն ու քսութիւն ընելու, հատապարտ թէ իրեն հերոսի ներքին է իրեն: Ո՞ր մէկը համբմ, որ մէկը յիշեմ, մութին մէջ նեւ տեղէն ձեռք ձեռք և հաւատացէք որ հերոսի մը պիտի հանդիպիք, աւելի շատ հերոս ունինք քան թէ հայ, և եթէ ազգապաշտ այդ ամեն մէկ հերոսին համար արձաններ կանգնենք, չեմ գիտեր, ո՞ր պիտի գտնենք հող: Հայաստանը շատ փոքր է, դուցէ Սահարայի անապատն ալ չըսէ:

Այժմ շատ դժբերին պիտի լինի ծանրանալ մեր Պրն. Դաշնակցականներու վրայ: Դաշնակցութիւնը կ'ըզոններ չունի, այլ ընդհակառակը կ'ըզոններ իրենք, Դաշնակցութիւնը դրամական գանձանակ չունի, այլ գանձանակ չունի, Դաշնակցութիւնը նախագային վարչութիւններ չունի, այլ կ'ըզոններ կոմիտէներ, Դաշնակցութիւնը զեկավարներ չունի, այլ լիազոր ներկայացուցիչներ, ընդհանուր գործակալներ: Կարծաւ յամառաբար ապացուցանելու թէ ինքը ապակե դրոշմացման կ'ըզոններ, կ'ըզոններ Դաշնակցութիւնը, որպէս թէ կ'ըզոններ, կ'ըզոններ Դաշնակցութիւնը, գանձանակներ, լիազոր ներկայացուցիչներ, ընդհանուր գործակալներ, իմապարտութեան լիազորներ կ'ըզոններ հայելները չեն: Այո, մենք կը հասկնանք, Դաշնակցութիւնը փոխանակ մէկ միապետի մը քանի միապետներ ունի, այնպիսի դալի մը մէջ կ'ապրին որ աչքերնիս արեւնով լեցուած է և նոյն իսկ չենք տեսնիր այն խաղը որ աչքերդուկ կը կոչուի: Մեր ականքը խլացըներու չափ շարունակ կը կրկնեն թէ՛ Դաշնակցութիւնը արատաւորեալ անցեալ չունի: Արդեօք այդ հարցը առաջ պարզանքը դէքով չափ դադարաւ ունին Դաշնակցութեան անցեալ պատմութեան վրայ, անուշտ ոչ, եթէ ունենալին շատ յստակ պիտի տեսնէին այն խաղը:

(*) Բնագրին մէջ յիշուած անուններու տեղ մենք կ'աւարտութեամբ անցանք:

տառակութիւնը, որ Դաշնակցութիւնը ունեցաւ 1891ին, երբ Պրն. Դաշնակցութեան գանձանակը կը մոռնէր հազարաւոր բուպիներ: Ո՞ր դեռաց այդ դրամներն . . . Ես գիտեմ . . . Եւս մը սեփականացուց 10 հազար, . . . Եւս մը քանի մը հազար, իսկ ուրիշ . . . Եւս մը Ռուսմանիայ և Թիֆլիզի մէջ իշխանական զաւեհներ կուտար . . .

Ինչ էր Դաշնակցութիւնը 91-93ին. — Կենդանի մեռեալ մը: Մենք կը թողունք ներկայիս տեղի ունեցած ուրիշ խոյր զեղծումները, իսկ անկարելի է չլիւստակել այն փոթալիս երթեւեկութիւնները Ռուսաստանի ներքին նախագահները: Պէ՞տք է կրկնել այն գնացքները, որ մեծանուն Դաշնակցականներ մի ամուսայ միջոցին կը վազէին Թիֆլիզից Մոսկով, Մոսկովից Բեթերպուրկ, իսկ Թերեզից Պարիզ, Լոնդոն, Պուլկարիա և Ռուսմանիա երթալ գալը հաշիւ չունի. . . Եւ Դաշնակցութիւնը արատաւորեալանցեալ չունի: . . . Ինչու . . . որովհետեւ փոխանակ մէկ Նազարէկի. քանի մը տասնեակ Նազարէկի կը սնուցանէ իր ծոցի մէջ. . . Իրաւունքը հորին է կ'ըսէ առածը, և մենք կը բարեիշխենք իրաւունքը թիւի մէջ է:

Պատմենք մի փոքրիկ էջ, որ անուշտ պիտի կազմէ մեր յեղափոխական պատմութեան մոռցուած մէկ անկիւնը և ուղղակի առնչութիւն ունի հարցի հետ:

Ամերիկայի մէջ կազմուած Հայկական Միութիւնը, իր երկրորդ պատգամաւորական ժողովը մէջ կ'ըզոնէր գործիչ և կազմակերպուել հայտնէր ամերիկացուց մէջ ևս, և կ'ըզոնէր յանձնարարութեամբ մի ամիս յետոյ այդ յանձնարարութեամբ Յոր պատգ. ժողովին զեկուցում կուտար որ կազմած են չորս նըշանաւոր քաղաքներու մէջ ամերիկացիներէ բաղկացած մասնաճիւղեր, որոնց մէջ կը գտնուէին Նիւ-Եօքքի եպիսկոպոսը և համալսարան պրոֆէսը մը: Պատմենք մէջ զօրաւոր Կիւրիանի որդին, նշանաւոր բանաստեղծ և հրապարակագիր Օր. Էլիս Սթաս, Պէրուէլ և այլն և այլն, նիւթապէս բաւական հարուստ: Այս էր տեղեկագիրը և միւս կողմէ հայ ժողովրդին մէջ հետզհետէ ակնածուի կը դառնար: Բայց իրեն անկեղծ բնաբան, նախ պարտինք երկու տող ևս կ'ըզէ թէ՛ յիշեմ որ օրի վրայ կը յաւանանար այդ միութիւնը, բայց նա ևս ունեցաւ իր սխալները, սակայն չնորհիւ կազմակերպութեան անողմնորոշութեան, անմիջապէս յանցաւորը յայտնի կը լինէր և կը պատժուէր: Վեց ամեայ պատգ. ժողովը բաղկացած ամեն մէկ մասնաճիւղերու կարող ներկայացուցիչներէն կը բընենէր, կը դատաւարէր և կամ կը գովէր և փառասէքներ որ կային ստիպուած էին իրենց մոլութիւնը ստորենուն խորը պահել:

1896 թուականին, երբ Դաշնակցութիւնը բացի համակրողներէն ոչ մի ոյժ չէր ներկայացնէր, Լոնդոն քաղաքի Հայկական օթեանի (մասնաճիւղ) կը ներկայանար Սուրէն անուշտը Դաշնակցական ներկայացուցիչ մը, յայտարարելով թէ՛ «Դաշնակցականներու կողմէն կուտար. Հայկականներու հետ բանակցութեան մասնելու, միացման խնդրի առթիւ: Մենք ի հարկէ սկիզբ մեծարեցինք և խորհեցինք որ սպասէ մինչև հարկ եղած տեղ տեղեկացնենք, նա՞ ստիպուած էր համակերպուի:

Հայկ. Միութ. ընդհ. վարչութիւնը այս խնդրի առթիւ պատգ. ժողովի կը հրաւիրէր 13 օր յետոյ: Մենք մեր յարգելի հիւրին երկու օր յետոյ հարողեցինք այն օրու չուր և յայտնեցինք թէ վերջնական պատասխանը տասներեք օրէն յետոյ պիտի ստանար: Ի հարկէ ատոր ևս ստիպուած էր համակերպուի և մենք, պատասխանաւորութիւն յայտնեցինք հիւրասիրել

զիւրք մինչև այդ օր, երկու նըշանակաւ, նախ հասկնալ այդ պարտին հորին, ծուծը, երկրորդ առանց մէկ մը չճանաչած չեմուտի ժողովրդի մէջ, արդէն ժողովրդի ցար հերթը իր իրեն, բայց զարմանալին այն էր որ այդ 13 օրուայ միջոցին Պ. Սուրէնը երբեք անգիտա չէր մնար, կը մըտնէր մեր անդամներու մէջ կը բընենէր, կը վիճէր և միտ կը դուրս Դաշնակցութիւնը. իսկ մեզ հետ կը վիճէր կ'ըզոններ ման և ապակերպութեան վրայ, և Լոնդոնի օթեանը շարաթիւրեայ նախ մէջ կընտրէր իր պատգամաւոր տեղեկագրութեամբ հանդերձ:

Հայկ. Հիւրերը պատ. ժողովը լեւելով Լոնդոնի պատ. ժողովի այդ տեղեկագրութիւնը, որ բացարձակապէս կը յայտարարէր թէ Պ. Սուրէնը ոչ թէ եկած է Հայկականներու հետ միանալու, այլ Հայկական օթեանի որսալու, Բուրաւոր տուած ընդհ. վարչութեան բանակցելու Պ. Սուրէնի հետ:

Ինչ խաղեր, ինչ կեղծաւորութիւններ ըսես չըրոս այդ Սուրէնը մինչև յաջորդ պատ. ժողովի օրը: Նա ուղեց խառնել Հայկական օթեանի կողմէ. թէ և չայլուցաւ, նա թ օ զ փնջ քիչ թէ շատ տըլի ընկնող անձնաւորութիւններուն, նա մտաւ ժողովրդի մէջ և կազմեց Դաշնակցական կոմիտէներ:

Հայկ. Երբ պատ. ժողովը դուրսարեւեալ Պատմենք մէջ, ուր ևս գուժարեւեալ Դաշնակցական կոմիտէները: Առաջին օրը երկու կազմակերպութիւնները ունեցան առանձին առանձին ժողովներ և երկրորդ օրը խառն ժողով, լուծելու ծրարին ինչ ինչ կէտերը, և աղմկալի երկու օրուայ անընդհատ նիստերէ յետոյ, կազմ ի կազմ հընչակցեալ միութիւնը:

Երբ գաղափար մը ունենար Դաշնակցութեան ապակերպութեան վրայ, խնդրեմ ուղարկութեան առէք հետեւեալները:

1.—Դաշնակցական կոմիտէները ունեցան 14 պատգամաւոր և իրենց քաղաքներու մէջ մի միայն իրենց կային Դաշնակցական, մէկ մարդը ուրեմն կուտար թէ՛ պատգամաւոր և թէ՛ քուտուտ: Հինգ քաղաքներ 7ը անդամէ պակաս են 2-3-5-7-ամենէն մեծը 15 անդամ ունի, մինչդեռ Հայկականներ 300-500 անդամ ունենին և 16 պատգամաւորներ, և բոլոր այն քաղաքները որ 9ը անդամէ պակաս թիւ ունենին. պատգամաւոր զրկելու իրաւունք չունենին:

2.—Քուտուտութեան միջոցին երբ Հայկականներ մը առաջարկութիւնը ընդունուէր, Պ. Սուրէնը ոտքի կանգնելով կ'ըզոնէր պատգ. կողմնակցութիւն կայ. չեմ ընդունում. . .

3.—Հայկական օթեանի ընդհանուր վարչութեան երկու անդամներու թիւակ կուտար. որպէս զի մուրացականութիւնը դադրի, միւս իրեն բարոյիչ, միւս իրեն քաղաքաւոր, մի թղաղի օր հաղի թէ օրապահիկի կը բաւէ: Զափաղանց խորթ եկաւ այս Պ. Սուրէնի՝ առաջին թէ յեղափոխական ապակերպը վաճառականութիւնն է, մինչդեռ պարտը չէր գիտեր որ Ամերիկայի մէջ և ոչ մէկը ուրիշին ոտնթիւ մը և պատառ մը հաց ծրի կուտայ, և ինքը կ'ապրէր կոմիտէներու հաշուով: Լաւ մարմնաթէկայ էր. գիտէր որ թղաղ չըլլալով ուղղմին չափ կը շրթնէր ինչպէս եղաւ—միացումը հոգեկուտեցաւ հետեւեալ պայմաններով:

Ա.—Կ'ընդունուի Դաշնակցութեան ծրարը մի քանի բարեփոխութեամբ. 1.—Դրամական կեդրոնական կացա չընդունուի, ամեն մի կոմիտէ կը պահէ իր զընամբ ի պահանջել հարկին գործածելու համար: 2.—Հայկական միութիւնը կը պահէ իր գոյութիւնը միայն միացած կը հոգեկուտէ և ոչ լուծուած:

Բ.—Ամերիկայի Կեդր. կոմիտէն կ'ունենայ իր ներկայացուցիչները թէ իրաւարութեան և թէ միւս

Կեդր. կոմիտէներու մէջ, ինչպէս և անոնք մեր մէջ:

Գ.—Կատարեալ անկախութիւն իր ներքին գործերու մէջ: Դ.—Ամերիկայի Կեդր. կոմիտէն կ'ստորագրէ Հայ Յ. Դաշ. և Հայկ. Հ. Միութ. միացեալ Կենդրոնական կոմիտէ:

Այս որոշումներով միացած հընչակցեալ և ընտրուեցաւ ընդհ. վարչութիւն 5 անդամէ բաղկացեալ, որոնց 3ը Դաշնակցական էր և 2ը Հայկական: Եւ այսպէս կազմ ի կաղ միացած կազմակերպութիւնը յառաջ կ'ընթար:

Օր մը Տիգրան Վահանեան անունով լիզոր Դաշնակցական մը, առանց պատգամաւորական ժողովի դուրսման և նոյն իսկ առանց ընդհ. վարչութեան գուժարման, չընթարեալով մը միութիւնը չընդհանրեալ կը համարի, առաջ բերելով կարգ մը սուտ ու փուտ զրպարտութիւններ: Այսպէս անհատ մը կը կոտորէ 29 պատգամաւոր և Դաշնակցական երկու ներկայացուցիչներու որոշումը: Ահա կենդանի օրինակ մը ապակե դրոշմացման և իսկական քողի տակ ծածկուած համարներէ, և նա կ'որոշէ վրէժ լուծել խաբարներէ, խաղախներէ և կ'սկսի կեղծել: Մենք բացարձակապէս կը խոստովանինք որ, կոմիտէի բաց 5 անդամէ մեռաներուն ծանօթ չէր այդ գործինքը, միացածները համոզմամբ Դաշնակցական միացած էին, Հիւրը միայն գիտէր և որոշ ուղղութիւնում առաջ կ'ընթար, կ'ընտրուէր և ստորագրէր բարոյապէս փառացած այդ անապա եսամոլները. . .

Այսպէս մենք հետեւէ կ'ըսենք նախ իմանալու թէ՛ իսկապէս Դաշնակցականները վատ են թէ մենք սխալած ենք և անկեղծօրէն կը խոստովանինք թէ որպիսի որ մենք կը կեղծէինք բայց չարունակ կը փնտրէինք ճշմարտութիւնը, բայց ցաւ ի սիրտ պիտի յայտնենք որ Դաշնակցութիւնը իր պարագլուխներով Նազարէկեանութեան պարզ կայելին է, իսկ ապակերպութեան վրայ նորա այնպիսի հաւատք ունին. որքան Նազարէկը իր սօցիալիստական սկզբունքներու վրայ: Պ. Սուրէնը, Պ. Վահանեանը և ուրիշներ երբ վիճարանութեան մէջ նեղը միացած են ինձ ուղղակի յայտնած են թէ դա մի գէնք է մի գիմակ,—երկուքն ալ ողջ են թող հերքեն եթէ կը հաճին:

Մենք իսկապէս Նազարէկի բանահայտներէն զրուած, ըստ մը կասկածեցանք գոհացում գտնելու պակերպութեան սկզբունքի մէջ և այդ նպատակաւ ունեցանք շատ մը վիճարանութիւններ թէ՛ Տիգրան Վահանեանի թէ՛ Սուրէնի և թէ՛ շատ մը Դաշնակցականներու հետ, շատ որ Դաշնակցականներու 100ին 95ը ոչ մի գաղափար կարող չէ սույ ձեզ այդ ապակերպութեան մասին. իսկ լիազորները գիտէին և միգի տուին հետեւեալ պատասխանը երբ հարցուցինք թէ՛ «Ըստ ապակերպութեան, ամեն մէկ կոմիտէ անկախ պիտի ըլլայ Կեդրոնական կոմիտէէն, և հետեւաբար ամեն մի Դաշնակցական անհատ անկախ պիտի ըլլայ կոմիտէէն: Մեզ պատասխանեցին.— «Այսքան ինչպէս կարելի է առանց իր աւր ու հետ յաւար ր ու թ ու ան, ինչպէս կարելի է գործ արտաբերել:»

—Պարտնենք, դուք ապակե դրոշմացում կ'ընդունէք այնպէս չէ՞, լաւ, ուրեմն հակառակ էք ամեն մէկ կեդրոնացման, ըստ խմբակներու մէջ, ըստ Կենդրոնական կոմիտէներու մէջ, և ինչ կ'ընէք ըսել իրարու հետ յարաբերութիւն ըսելով, բացարձակ թիւ խնդրեմ, ինչ կը նշանակէ «Կեդրոնական կոմիտէ», կ'ըզոն ան ապակե խաղապէս ձեզ կը մտնէ, ինչ է կ'ըզոնական կոմիտէի դերը, ըստ ապակերպութեան միւս թէ՛ էք դուք, ինչ է ձեռք

դերը: Դաշնակցական մը ապակեգրութեան է, այսինքն կապը ձգուած ուղղած կողմը կ'ընթար. . . Լաւ ուրեմն, Զեր ներկայութիւնը ձեզ կը մատնէ, Զեր լիազոր ներկայացուցիչները մի թէ ծաղաղանք մը չէ գէպի ապակերպութեան վեհ սկզբունքը, և ես իրեն ճշմարիտ Դաշնակցական շատ լաւ ըմբռնելով այդ վեհ սկզբունքը, կը բողբոմ Զեզ գէմ և կը նկատեմ զեղծում գործողներ: Ինձ պատասխանեցին. «Է՛հ գործ չունիս» . . . Այսպէս գայլեր ոչխարի մոլոր հագած, կը մուրեցնեն խեղճ ժողովուրդը, և մենք այլեւս լուռ չենք կրնար մնալ, որովհետեւ այդ պարտնենք շափը անցուցին . . .

1896 թուականին Նազարէկի անկումն յետոյ, երբ ժողովուրդը ընկնուած իր վրայ ծանրացող ձեռքէն, աչքերը լեցուած հարեւազարաւորներու արեւնով, խորհուած հազարաւոր որբերու և այրիներու աղիողորմ ձիւղէն, կը փախաբէր մոռնալ անձնական և կուտակցական «եսները և նետուիլ կուտակուողները: Ինչ խաղեր չխաղացին խեղճ ժողովրդին խաղաչեցնելու համար այդ վեհ գաղափարէն . . .

Միութիւնի Ուստրի թղթակիցը շատ իրաւամբ դիտել տուած թէ թէ Ամերիկայի գործերուն անկայուն վիճակը շատ աւելի գործ կը տեսնէ քան Վահանեանը, և մենք կը ցրուինք զանազան կողմեր, կը քակուի նոր շինուած գործ մը և Վահանեան կը յաջողի իր կուտակցամոլ շահատակութիւնները յառաջ տանիլ . . .

Ապակերպութեան հայելին կ'արտակերպութեան Դաշնակցութեան փայլուն արեւ մութ խորշեր: Մենք լաւ ճանչցանք և ջանացինք ծանօթացնել հայ ժողովրդին և մասնաւորապէս ան կ'ըզ Դաշնակցականներուն,—որոնց մենք կը հաւատանք թէ մեծ թիւ կը կազմեն—այն ապակերպներ որ կ'ոչնչացնեն Մայր-Հայրենիքը ճշմարիտ և անձնաւոր դիտարկները:

Վ. Յ. Թ.

ԲԱՑ ՆԱՍԱԿ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻԿ

Սիրելի Հայրենակիցներ,

Ինչպէս ժամանակէ մը ի վեր գրեթէ ամբողջ հայ ժողովուրդը համալուծ գոյացուցած է որ Հայկական հարցի գերազայն շահերը կը պահանջեն յետադի, կուտակցութեանց միութիւնն է:

Մենք ժամանակին անձամբ ահապարտեցինք Դաշնակցականները իրենց անհիմն և համալուծեցանք թէ՛ արդեօք են որ զիմանկութեան տակ կ'ըզոնեն ժողովուրդը խաբար: Պատիւ մեր զիմանալ միութեան: Պատիւ մեր սրբազան պարտականութիւնը կատարելու համար, ամեն ինչ մանրամասնօրէն ամփոփեցինք «Դիտարկներ» անունով գրքոյի մը մէջ:

Կամբերնէս բողոքով անկախ պատճառներով մեր գրքոյի հրատարակութիւնը քիչ մը ուշացաւ, այժմ մամուլ տակ է և քիչ ատենէն ըստ պիտի տեսնէ:

«Գիտակաւորներ» (ձրի կը տարածուի) ունենալ փափաքողներ կըրնան զիման մեր հասցէին:

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԿԱՆ

2 Դեկտ. 97 Ալեքսանդրիա

A. Djangulian
Poste Restante
(Egypte) Alexandrie